


Երկուքը բառս կը թարգմանեն «խաղ, կատակ», կցելով Կովկասի Հայոց հանաք բառին հետ:

Նախ նկատենք, թէ բառը յոքնակի է, սրովհետեւ եին դրուած է յոդնակի. ուստի եզակի ձևն է միահանգեալ մի հանգո:—Երկրորդ՝ խնդիր է թէ ինչպէս կէտադրելու է նախադասութիւնը: Վենետեկի և Պատկանեան ապագորութիւնը վերի ձևով է, մինչդեռ Հայկադ, բառ. կը կէտադրէ այսպէս «... փափաքէր: Սահայն միահանէք այն էին նորա, ի չորք անկեալ յոտս և ի ձեռս սողէր . . .»: Այս կէտադրութիւնը ըստ իս ուղիղ չէ, սրովհետեւ այս պարագային կսպասուէր զի. «Սահայն միահանէք այն էին նորա, զի ի չորք անկեալ յոտս և ձեռն»: Ուղիղ է առաջինը:

Առաջին ձևով կէտադրելով խօսքը, «հանաք» նշանակուած թիւնը իմաստ չունենար. «Ազահութեան ծարաւ ունէր, բայց այդ հանաք էր» անըմբռնելի է ինձ. մանաւանդ որ հանաք բառն ալ յետին քրդական փոխառութիւն մըն է, հմտ. քրդ. հեցեկ «չատախօտութիւն, անպէտ խօսքեր», բիւհեցեկ «առանց կատակի, լուրջ», հանակ «կատակաբանութիւն», հանակ կիրին «հանաք անել», հանակչի «միմոս, կատակաբան» և այլն:

Ըստ իս միահանգեալ կը նշանակէ «լուսնի, փորձանք». Բուղանդի խօսքը կը թարգմանուի այսպէս. «Յովհան ազահութեան ծարաւի էր, բայց այդ ազահութիւնը գլխուն փորձանք կը բերէր (ինչպէս այգեպանին գէպըին մէջ. Բուղ. Զ. 9)»:

Հ. Աճառեան



ՀԱԼԼԷԻ ԳԻՍԱԻՈՐԻ ՀԵՏ

ԶՈՒԳԱԳԻՊԱՆ ՀԱՄԱՆԱԲՀԱՅԻՆ ԴԵՊՅԵՐԸ:

Աչքի առաջ ունենալով այն ընդհանուր հետաքրքրութիւնը, որ զարթել է Հալլէի գիտաւորի երևան դալովը, այլ և դրա հետ կապուած այն խիստ ահաբեկիչ լուրերը, որ տարածուած են ժողովրդի մէջ, իբր թէ գիտաւորը պոչով պէտք է խփի երկրիս և կործանի կամ զանազան աղէտներ պիտի տեղի ունենան, մենք թարգմանաբար տալիս ենք յարգելի ընթերցողներին Տօյ Վերսերի նոյն գիտաւորին վերաբերեալ յօդուածը, որից իւրա-

քանչիւր սք պարզ կտեսնի, որ վերոյիշեալ բոլոր լուրերը անհիմն են և տարածւում են մութ անձնաւորութիւնների ձեռքով: Ինչպէս ամեն մի մոլորակ, այնպէս էլ Հալլէի գիտաւորը գոյութիւն է առել աշխարհիս հետ միասին և համաշխարհային բոլոր մոլորակների նման, նա էլ իւր որոշ շրջանն է կատարում կանոնաւոր կերպով արեգակի շուրջը ու 75 տարէնը մի անգամ մօտենում է երկրիս և երեւում է երկար ժամանակ իւր պայծառ պոչով: Որովհետեւ գիտաւորը խիստ երկար և լուսաւոր պոչ ունի, որ բաղկացած է զանազան գազային բաղադրութիւններից, երկիրը իւր շրջանառութեան ժամանակ ինչպէս շատ անգամ նայնպէս և այս անգամ գիտաւորի պոչի մէջով կանցնի առանց որևէ վնասի կամ ազդեցութեան ենթարկուելու: Գիտաւորը իւր շրջանառութեան մէջ երեւան կգայ մի քանի շաբաթ լոյս կտայ, և հետզհետէ հեռանալով կաներեւութանայ մինչև որ 75 տարուց յետոյ, այսինքն 1985 թուին, կրկին երեւան գայ: Երկրի վերայ տեղի ունեցող գէպերը ինչպէս առաջ, նայնպէս և այժմ ոչ մի կապ չեն ունեցել և չեն ունենայ այդ գիտաւորի երեւալու հետ:



Գլխաւոր պատճառը՝ թէ ինչո՞ւ Հալլէի գիտաւորը այդքան խիստ և յուզիչ ապաւորութիւն է առաջ բերում մասնագէտ և ոչ մասնագէտ աստղագէտների մէջ, գտնւում է այն հանգամանքի մէջ, որ նա աշխարհիս բոլոր աստղերին վաղուց յայտնի է: Որ իւրաքանչիւր անգամ, երբ այս թոյլ—առկայծող մարմինը ամենամեծ հեռադիտակների հետազօտութեանց համար հնարաւոր է դառնում, մենք տեսնում ենք անփոփոխ կերպով միևնոյն «Գիտաւոր աստղը», որը սարսափեցրել և ահաբեկել է մեր նախորդներին: Ուզի՞ր է, թէև երեացել են և ուրիշ աւելի պայծառ գիտաւորներ քան թէ Հալլէինը, սակայն դոցանից քչերին է յաջողուել տեսանելի դառնալ մի քանի հաբլը տարի առաջ մեր նախորդներին: Այն ինչ Հալլէի գիտաւորը՝ գլխաւորապէս պատմական գիտաւոր է, նորա մատին եղած տեղեկութիւնները հասնում են մինչև 87 թ. Ք. ա., դուրէ և մինչև 467 թ. Ք. ա., թէև այս վերջին երեւալը կասկածելի է:

Գիտաւորը կոչուել է գիտնական Հալլէի անուամբ, որ առաջինը դտաւ նորա պարբերական շրջանառութիւնը: Մինչև այդ ժամանակ գիտաւորը գիտել էին շատ անգամ, բայց, ոչ ոք չէր ենթադրում, որ այդ միևնոյն երկնային մարմինն է,

որը պատում է արեգակի շուրջը ճիշտ ժամանակագրութեան ենթարկւող շրջանների մէջ: Մեր ձեռքի տակ ունենալով բազմաթիւ նիւթ և աչքի առաջ ունենալով խնդրի ընդարձակութիւնը մենք ցոյց կը տանք այստեղ միայն մի քանի պատմական խոշոր դէպքեր, որոնց վկայ է եղել այս նշանաւոր գիտաւորը: Անտաիապաշտութեան ազդեցութեան տակ հնումը մարդիկ կարծել են, որ այս դէպքերից շատերը առաջ է բերել զիտաւորի երևալը:

467 թ. Ն. Բ. Ք. : Զինատանում գիտաւորը տեսանելի է եղել Տինգ-վանդ կայսեր թագաւորութեան երկրորդ տարին, որ պիտի լինի 467 թ. Ք. ա., երբ աստղը պէտք է երևեցած լինի: Տեսնուած գիտաւորը հաւանականօրէն եղել է Հալլէի գիտաւորը երկրին մօտիկ իւր պարբերական շրջանառութեանց մէկի մէջ:

240 թ. Ն. Բ. Ք. : Այս թուականին Զինացիք նորից նշանաւորում են գիտաւորի երևալը, որովհետեւ նորանց Մա-տուան-լի-նում ասուած է. «Զի-լսվանդի թագաւորութեան Ե-րդ տարին երևեցաւ գիտաւորը, առաջ արեւելքում, յետոյ հիւսիսում: Հինգերորդ ամսին (Մայիս) 16 օր շարունակ տեսանելի էր նա արեւմուտքում»:

Այդ ժամանակ Եգիպտոսում իշխում էր Պտղոմէոս III Է-վերդէտը: Հռովմայեցիները մղում էին առաջին պոնիքական կռիւը, որ տևեց 23 տարի: 241 թուին, Եգէյեան կղզիների մօտ եղած ճակատամարտից յետոյ Կարթագէնը ստիպուած խաղաղութեան դաշն կապեց և Սիցիլիան դատարկեց: Այդ պատճառով այդ մեծ քաղաքի վաճառականութեանը մեծ վնաս հասաւ: Յաջորդ գիտաւորի երևալու տարին, 240 թուին, Կարթագէնը վնասուեց ևս առաւել սիցիլիացից տարած վարձկան զինւորների ապստամբութեան պատճառով: Ապստամբների գլուխն էին անցել՝ Սպենդիյ (փախստական արաբ) և Լիվիացի Մատո: Այս յանդուգն, գլխից ձեռք վերցրածները առաջնորդեցին զօրքին իրենց շրջակայ երկիրները կողոպտելու: Նոքա ապստամբեցրին սփրիկեցիներին, պաշարեցին Ուտիկա և Գիպպօ քաղաքները և Կարթագէնի հետ ցամաքային ճանապարհը միանգամայն կտրեցին: Պատերազմը վերջացաւ յաջող կերպով, շնորհիւ Գամբիկարի ճարպիկութեան, որով յաղթուեցին Սպենդիան և Մատոն: Այդ կռիւը անուանուեցաւ. «Անողորմ պատերազմ».—241 թ. Սպարտայի երիտասարդ Ագիս թագաւորը սպանուեցաւ Լէօնիտի ձեռքով,—նորա համար, որ կարենու վերանորոգումներ մտցնել էր կամենում: Սակայն ուշադիր է նկատել, որ մի քանի տարի յետոյ Լէօնիտի որդին՝ Կլէօմէն ամ-

բողջովին մտցրեց այն վերանորոգումները, ինչի համար Ազինն էր սպանուած:

163 թ. Ն. Բ. Ք. Գիտաւորի այս թուականի երևալու համար գրաւոր ոչ մի յիշատակութիւն չկայ, թէ 165 թ. տեսնուած պայծառ զիտաւորը կարող է Հալլէինը լինել: Այդ ժամանակ հրէաները կռիւ էին մղում Ասորիքի Անտիոքոս Եպիփան թագաւորի հետ, որը հրէաներին զայրացրել էր Եհովայի սեղանի վերայ խոզի միս ղոհ բերելով: 168 թուին Մակաբէյր իւր որդւոց հետ ապստամբեց և ազատութեան համար պատերազմ սկսեց: 164 թ. Եպիփանը մեռաւ և գահ բարձրացաւ նորա որդի Անտիոք Եւպատորը, սակայն կարճ ժամանակից յետոյ նա արքայութեց և սպանուեց Գմիտրիայից, որը իւր ձեռքն առաւ կառավարութեան դէկը և շարունակեց պատերազմը Յուդա Մակաբայեցու դէմ: Եզրիպտոսում այդ ժամանակ թագաւորում էր Պտղոմէոս IV-ը:

87 թ. Ն. Բ. Ք.: Հալլէի աստղը երևալով 87 թուին Հռովմում քաղաքացիական կռիւը իւր գագաթնակէտին հասած գտաւ: Մարիյ, որի կեանքը լի էր ամենատեսակ արկածներով, ընտրուեցաւ յաջորդ Սուլլայի, բայց սենատի կողմից մահուան դատապարտուեցաւ: Բազմաթիւ զարմանալի արկածներից յետոյ Մարիյ փախաւ Եգիպտոս, բայց շուտով վերադարձաւ Իտալիա, միանում է կոնսուլ Յիննայի հետ, պաշարում են Հռովմը, ուր և վերջապէս մանում են յաղթութեամբ: Նա վրէժ է առնում իւր նախկին թշնամիներից, սարսափելի կոտորած է առաջ բերում, որից յետոյ եօթերորդ անգամ կոնսուլ է դառնում: 87 թուի վերջին Սուլլան պաշարեց Աթէնքը և 86 թ.-ի Մարտի 1-ին վերցրեց յարձակմամբ: Մի տարի առաջ (87-ին) նա վերցրեց Պիրէյ, յետոյ Արքիդայոսին ջարդեց Խերոնի մօտ և այդպիսով վերջ դրեց որևէ փորձի Յունաստանի ազատութիւնը վերականգնելու համար:

Զինացիք գրում են, որ «Խառլ Իւէնի դարաշրջանի երկրորդ տարուայ (87 թ.) եօթերորդ ամսին (օգոստոս) զիտաւորը արեւելեան կողմն էր», բայց թէ ինչ քաղաքական դէպքեր տեղի ունէին այն ժամանակ, մեզ, համարեա, յայտնի չէ:

11—12 թ. Ն. Բ. Ք.: Դիօն Կատսիոսը յիշատակում է, որ Ազրիպայի մահից առաջ Վալերիա Մատտալի և Սուլպիցիա Ավրիկինի հիւպատոսութեան ժամանակ, զիտաւորը երևաց, և թուում էր նորանց ուղղակի Հռովմի վերայ կախուած: Որ այդ Հալլէի զիտաւորն է հաստատուում է Զինացոց արած նոյնանման գիտողութիւններով: Գիտաւորն անցաւ Առիւծի, Եղնաբաժի

Հերկուլէսի, Աղեղնաւորի և Կարիճի համառակողութեանց միջով, անհետանալով արեգակի ճառագայթների վայել մէջ իւր երեւուլուց 50 օր յետոյ:

66 ր. Ք. յ.: Այստեղ վիճելի հարց է ծագում՝ թէ երկու գիտաւորներից ո՞րը Հալլէինն էր—66 թէ 65 թուականին: Զինացոյց տարեգրութիւնների մէջ երկու գիտաւորներն էլ յիշատակում են: Առաջին գիտաւորը նկատուեց Առիւծի համատեղութեան մէջ և երեւում էր 50 օր: Նոցանից մէկը մեծ սարսափ առաջ բերեց հրէաների մէջ, որովհետեւ այդ գիտաւորը թուում էր ուղղակի կախուած պաշարուած Երուսաղէմի վերայ. վերջինիս առումից և Հռովմայեցիներին ձեռքով Տիտոսի առաջնորդութեամբ կործանումից առաջ: 66 թուին հրէաները ապստամբեցին, իսկ 67 թ. Ներոնը ուղարկեց Վիսպասեանին, որ և 70 թուին վերցրեց Երուսաղէմը: 66 թ. Ներոնը այցելեց Յունաստանին և Օլիմպիական խաղերին մասնակցեց մրցանակ ստանալու համար: Յաջորդ տարին ըստ աւանդութեան Ս. Պետրոսը նահատակուեց, իսկ Լինը նշանակուեց Երուսաղէմի եպիսկոպոս: Հետեապէս Ս. Պետրոսը տեսաւ գիտաւորը քրիստոնէական եկեղեցւոյ պատմութեան կրիտիքական ընդմէջ: Հաւանօրէն Ս. Յուդան յատկապէս այս գիտաւորին ինկատուէր, երբ գրում էր. «Երեբուն աստղեր, որոնց համար գիշերային խաւարը միշտ ապահովուած է»:

141 ր. Ք. յ.: Զինացիներին այդ տարուայ մէջ նկատած միակ գիտաւորը միանգամայն համապատասխանում է Հալլէի գիտաւորի տարրերի հետ: Այդ ժամանակ Հռովմայեցիք դրականապէս տիրում էին Բրիտանիային և շարունակ պատերազմներ էին մղում Հալիդոնիաների հետ: Հռովմէական կայսրութիւնը գտնւում էր Անտոնինների իշխանութեան տակ:

218 ր. Ք. յ.: Մա-տուան-լինի Զինացոյց ցուցակի մէջ գտնուում է գիտաւորի նկարագրութիւնը: Դիօն Կասսիոսը նմանապէս նկարագրում է գիտաւորին, խօսելով նորա՝ իբրեւ մի պոչաւոր աստղի մասին, որ գալիս է արեւմուտքից դէպի արեւելք: Նա անցաւ Կառալարի, Երկւորեակների, Առիւծի և Կոյսի համաստեղութեանց միջով, Մակըրին կայսրը վախճանուեց գիտաւորի երեւուլուց յետոյ, և զինուորները Հելիօօփալին գահ բարձրացրին, որի պատճառով կառավարչական իշխանութիւնը ընկաւ Յուլիոս Մեգի և Յուլիոս Սեմի ձեռքը,—կայսեր տառի և մօր: Հելիօօփալը Ասորիքից վերցրեց արեգակի երկրպագութիւնը և ինքը առաջին քուրմն էր Արեգակ—աստուծոյ:

295 ր. Ք. յ.: Գիտաւորը տեսանելի եղաւ «չորրորդ ամսում», երբ նա անցնում էր Անգրամիտի և Կոյսի համաստեղութեանց

միջով: Այդ ժամանակ Դիոկղետիանոսը հռովմէական կայսրութեան վերափոխմամբ էր զբաղուած: Նա շատ յայտնի կռապաշտ էր, իսկ նորա յաջորդը՝ Կոստանդինը եղաւ առաջին քրիստոնեայ կայսրը:

373 թ. Ք. յ.: Զինացիք յիշատակում են այն գիտաւորի մասին, որ տեսանելի էր Օձակալ համաստեղութեան մէջ, Օձակալ և Հերկուլէս համաստեղութեանց սկզբնաւորութեան մօտ: Հէնց այդ ժամանակները հռովմէական կայսրութիւնը կրկին բաժանուեցաւ. Վաղէնտիանոս դարձաւ կայսր արեմուտքում, իսկ Վալինցիոսը — արեւելքում: Առաջինը պատերազմ էր մղում Ալլէմաններին դէմ, իսկ երկրորդը պաշտպանւում էր գերմանացիների արշաւանքներից: Գերմանիի թագաւորութիւնը զօրեղացաւ թէ ոյժով և թէ փայլով:

451 թ. Ք. յ.: Հալլէի գիտաւորն, այս թուականին գիտել են թէ Զինացիք և թէ Եւրոպացիք: Առաջինները գտան նորան Մայիսի 17-ին և հետևում էին նորա ընթացքին Յուլի, Ագիւժի և Կոյսի համաստեղութեանց միջով մինչև Յուլիոսի կէտը: Եւրոպան այդ ժամանակ գտնուում էր կրիտիքական գրութեան մէջ: 450 թ. Մարցիան հրաժարուեց Հոններին հարկ տալուց, ուստի նոցա նշանաւոր առաջնորդը՝ Ատիլլան 451 թ. արշաւեց Իտալիա: Բայց Ֆրանսիայի հիւսիս արեւելեան մասում Շալոնա քաղաքի մօտ ջարդ կրեց, հռովմայեցի զօրապետ Տեցիայից, որը այդ նպատակով Գոտտերի և Ֆրանկների հետ դաշն էր կապել:

Շատ զօւար է մինչև անգամ որոշել այս ճակատամարտի պատմական նշանակութիւնը: Բառի բուն նշանակութեամբ այս պատերազմ էր կռապաշտութեան և քրիստոնէութեան մէջ, որովհետեւ եթէ Ատիլլան յաղթէր, քրիստոնէութեան զարգացումն շատ երկար տարիներ կանգ կառնէր: Այս ճակատամարտը նշանակալից է և նորանով, որովհետեւ նա վերջինն էր և կայսերական Հռովմի համար: Նա Հռովմի երկար և փառաւոր ծառայութեան գեղեցիկ վերջն էր: Ատիլլան մեռաւ 453 թ. և նորանից յետոյ Հոնների կայսրութիւնը քայքայուեց: Ատիլլայի փառքը մեզ է հասել նորվեգիայի և Իսլանդիայի աւանդութիւնների մէջ, նմանապէս և Գերմանիայի հին բանաստեղծութեան մէջ: Գերմանական բանաստեղծութեան մէջ Ատիլլան անուանուած է Էստել և նկարագրուած է «իբրև 12 հզօր թագ կրող, որ խոստացել էր իւր հարսին նուիրել իւր հզօր նիզակով տիրած 30 թագաւորութեանց երկրները» (Creasy): Նա ինքն իրեն անուանում էր «Աստուծոյ խարաղան», այսինքն, Աստուծոյ ձեռքին դործիք անբարոյական հռովմայեցիներին պատժելու

համար: Նոյն թուականին անգղիան ենթարկուեց իւտերի յարձակմանը, որոնք, բրիտանացիներին օգնութեան հասած Պիկտերին յաղթելուց յետոյ մշտական բնակութիւն հաստատեցին Կենտու¹, Գեմպլիքում և Ուայտ կղզու վերայ:

530 թ. Ք. յ.: Այս թուականի մօտերքը Սալոները իրենց թագաւորութիւնը հիմնեցին, որի մէջ մօտաւ Մեդլսկո և Էստէսկ իրենց մայրաքաղաք Լօնդոնով: Ամենայն իրաւամբ Անգղիացիք կարող են Հալլէի գիտաւորը բացառապէս իրենց ազգայինը հաշուել, որովհետեւ նորա երևալու հետ կապուած են յաջողութիւններ և լիաւք անգղիացոց համար և ընդհակառակը անյաջողութիւններ Ֆրանսիացոց համար: Այս թուականին Վելլիքարը նուաճեց պարսիկներին և ճնշեց ապստամբութիւնը:

607 թ. Ք. յ.: Պարսիկների արշաւանքը Փոքր Ասիա, որ այն ժամանակ հռովմէական նահանգն էր. Կոստանդնուպօլսի կայսրը ստիպուած էր շարունակ դէմ դնել նոցա յարձակումներին: Անգղիայում Էդէլքերտը տարածեց իւր իշխանութիւնը մինչև Իրլանդական ծովը:

684 թ. Ք. յ.: Մահմեդական արաբները յաբձակուեցին Արևելեան հռովմէական կայսրութեան վերայ և մի քանի տարուց յետոյ տիրեցին Ասորիքին, Եգիպտոսին և Ափրիկային: Գիսաւորին դիտել են թէ ճապոնիայում և թէ Չինաստանում:

760 թ. Ք. յ.: Գիսաւորը շատ պարզ տեսանելի էր և Չինաստանում և Եւրոպայում, Կոստանդին կայսեր թագաւորութեան 20-րդ տարին: Այդ ժամանակ Անգուստ Մակֆերդուոր Պիկտերի ամենամեծ թագաւորն էր Շոտլանդիայում և գրանուում էր իւր ոյժի և լիաւքի դադաթնակէտի վերայ, իսկ Անգղիայում Օֆֆա կայսեր մօտ Մերցիան միւս կայսրութեանց գլուխն էր:

837 թ. Ք. յ.: Գիսաւորը տեսանելի էր թէ Չինաստանում և թէ Եւրոպայում: Այդ ժամանակները ոմանք հաշուում էին նորան իբր նախանշան Լուդովիկոս Հասարակի մահուան: Դանիացիք աւերում էին Բրիտանիայի և Ֆրանսիայի ծովափերը և պատուհաս էին արեմտեան Եւրոպայի համար: Անգղիայի թագաւոր Էդբերտը 836 թ. վախճանուեց, նորան յաջորդեց իւր որդի Էդելթոլֆը, որը չկարողացաւ դէմ դնել նոցա արշաւանքներին, և վերջ ի վերջոյ դանիացիք բնակութիւն հաստատեցին նաև Անգղիայում:

912 թ. յ. Ք.: Թէև գրաւոր ոչ մի յիշատակութիւն մեր ձեռքը չէ հասել գիսաւորի այս հերթական երևալու համար, բայց բոլոր հաշիւները ցոյց են տալիս, որ նա անպայման այս

տարին պիտի երևար: Իսկ այդ ժամանակ Անդղիայում Թագաւոր էր Ալֆրեդի որդի Եդուարդը, որի իրաւունքները մի ժամանակ կամենում էր խլել իւր հօրեղբօր որդի Էդելշլօֆը: Բօլշօյի Հերցոգ Նորմանը Փրանսիայի Թագաւորից ստացաւ Նեյտարեան և կոչեց նորան Նորմանդիա, այն անուամբ, որով կոչում էին նորա Սկանդինաւեան կռիւները: Երբ որ գիտաւորը երևաց, Նորմանները ամուր ընկաւ թիւն էին հաստատել այդ երկրում, որտեղից և գիտաւորի յաջորդ 1066 թ. երևալու ժամանակ տիրապետեցին Անդղիային: Հերցոգ Բօլշօ ընդունեց քրիստոնէական հաւատը և պսակուեց Փրանսիայի հերցոգ Բուրբանի աղջկայ հետ, հաստատելով այդպիսով իւր ոյժը նոր երկրում, մինչև որ նորա յաջորդները վճռեցին փնարել «Թարմ անտառներ և նոր արօտատեղեր»:

989 թ. Ք. Յ.: Անդղիայում կառավարիչ էր Էտելրիգ Անլախար: Նա շարունակ պատերազմում էր դանիացիներին դէմ, որոնց աշխատում էր ճնշելով յետ մղել, սակայն ի դուրս գործը նորանով վերջացաւ, որ 1013 թ. Գանիայի Թագաւոր Սվէյնը հռչակուեց անդղիայի Թագաւոր:

1066 թ. Ք. Յ.: Անդղիայի պատմութեան մէջ հազիւ թէ նշանաւոր թուական գտնուի աւելի քան 1066 թ., երբ Վիլհելմ աշխարհակալը դարձաւ մեծ ոյժ, որի հետ հաշիւ պիտի ունենար ամբողջ Եւրոպան: Այդ առթիւ Գիբբոնը գրում է. «Ի հարկէ, Անդղիան նուաճումներից միայն շահուեց», իսկ Բապէնը ասում է, որ այդ նուաճումն «առաջին աստիճանն էր այն սանդուխտի, որով անդղիան բարձրացաւ և հասաւ այն բարձրութեան և փառքի, որի վերայ մենք նորան այժմ տեսնում ենք»։ 1066 թ. Անդղիայի դահի համար երեք թեկնածուներ կային. առաջինը—Նորվեգիայի Թագաւոր Հարոլդ Հարդրաւա, երկրորդ—Նորմանդիայի հերցոգ Վիլհելմ և երրորդ՝ Անդղիայի ազգային հերոս Հարոլդը:

Հարոլդը հանդիպեց Նորվեգիացիներին Ստամֆորդ Բրիջի մօտ (1066 թ. սեպտ. 25), ջարդեց նորանց և յետոյ, յոգնած զօրքով ստիպուած էր շտապել հալաւ Նորմանդիայի Հարոլդին հանդէպ, որ Պեպենսի մօտ 29 սեպտեմբերի ցամաք էր իջել:

Այդպիսով Հարոլդը ստիպուած էր զօրքը բաժանել երկու մասի, յետ մղել երկու արշաւանք, ձեռներեցութեամբ փորձուած զօրավարների, որոնց ձեռքի տակ գտնուում էին քաջ ընտրեալ զինուորներ, այնպէս որ Անդղիայի համար հարց էր ծագում թէ ո՞ւմնից կախումն ունենայ, Նորվեգիայից թէ Նորմանդիայից: Ինչքան էլ Հարոլդը քաջ և եռանդուն էր, սակայն այն խնդիրը, որի լուծումը նորա առաջ էր դրած, իւր

այժերից շատ բարձր էր, որովհետև ամբողջ Եւրոպան պապի առաջնորդութեամբ Վիլհելմի կողմն էր: Իսկ այդ ժամանակն էլ երևան է գալիս փայլուն գիտաւորը, որին համարում էին ժողովրդի մէջ կանխագուշակ նշան Վիլհելմի համար: Նորա պատկերը գտնուում է Բայէրեան պատերի նշանաւոր ասեղ-նազործութեանց մէջ և այժմ ապացուցած է, որ այդ յատկապէս Հալլէի գիտաւորն էր: Տեղեկութիւնները հազորդում են, որ նորա միջուկը հաւասար էր լրացած լուսնին, իսկ պոչը, սկզբումը կարճ էր, յետոյ այնպիսի մեծութեան հասաւ, որ ամբողջ ժողովուրդը անյաղթելի սարսափով բռնուած էր: Եւ որովհետև 1066 թ. երևալու պայմանները համարեա նոյնն են, ինչպիսին նախագուշակում են սոյն 1910 թ. երևալու համար, ուստի պիտի մտածել, որ այժմ էլ նորա փայլը մի շքեղ տեսարան կներկայացնի: Գառտինգսի մօտ տեղի ունեցած նշանաւոր ճակատամարտի գեղեցիկ և հետաքրքիր նկարագրութիւնը կարելի է գտնել Վրէլի գրքի մէջ հետևեալ վերնագրով. «Տասն և հինգ ճակատամարտ, որ համաշխարհային հռչակ էին կրում»: Վիլհելմ վերջինն էր, որ փորձեց նուաճել Անգլիան, որովհետև նորանից առաջ նոյն փորձն արել էին Հոլլանդացիք, Իսպանացիք և Ֆրանսիացիք: Այդպիսով գիտաւորի մի երևալովը Բոլլո՞ճեռք բերեց նորմանդիան և միևնույժ՝ Վիլհելմը նուաճեց Անգլիան:

Եզրպատասու՞մ 1066 թ, սով էր, որ տևեց եօթ տարի,— և այնպիսի սով, որի նմանը միջին դարերում չէր եղած:

1145 թ. Բ. յ.: Այդ ժամանակ Եւրոպան պատրաստուում էր երկրորդ Խաչակրաց արշաւանքի համար, որ սկսուեց յաջորդ 1146 թ. Անգլիայում Սաիֆաճի և Մօաի մէջ ներքին պատերազմ կար, որ վերջացաւ յօգուտ առաջինի: Այս տարուայ գիտաւորի համար միայն յիշատակուած է, որ նա երկար ժամանակ երևում էր և շատ փայլուն էր:

Կը շարունակուի.

ԱՐՏԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ

